ՀԱՎԵԼՎԱԾ 4
«Եվրասիական
տնտեսական միության
մասին» պայմանագրի

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ
Եվրասիական տնտեսական միության պաշտոնական վիճակագրական տեղեկությունների ձևավորման և տարածման կարգի մասին

1. Սույն Արձանագրությունը մշակվել է «Եվրասիական տնտեսական միության մասին» պայմանագրի (այսուհետ՝ Պայմանագիր) 23-րդ հոդվածի համաձայն՝ Միության պաշտոնական վիճակագրական տեղեկությունների ձևավորման և տարածման կարգը սահմանելու նպատակով:

2. Սույն Արձանագրության մեջ օգտագործվող հասկացություններն ունեն հետևյալ իմաստը՝

«անդամ պետությունների պաշտոնական վիճակագրական տեղեկություններ»՝ վիճակագրական տեղեկություններ, որոնք ձևավորվում են լիազոր մարմինների կողմից վիճակագրական աշխատանքների ազգային ծրագրերի շրջանակներում և (կամ) անդամ պետությունների օրենսդրությանը համապատասխան.

«Միության պաշտոնական վիճակագրական տեղեկություններ»՝ վիճակագրական տեղեկություններ, որոնք ձևավորվում են Հանձնաժողովի կողմից անդամ պետությունների պաշտոնական վիճակագրական տեղեկությունների, միջազգային կազմակերպությունների պաշտոնական վիճակագրական տեղեկությունների և անդամ պետությունների օրենսդրությամբ չարգելվող աղբյուրներից ստացված այլ տեղեկությունների հիման վրա.

«լիազոր մարմիններ»՝ անդամ պետությունների պետական մարմինները, այդ թվում՝ ազգային (կենտրոնական) բանկերը, որոնց վերապահված են անդամ պետությունների պաշտոնական վիճակագրական տեղեկությունները ձևավորելու գործառույթները:

3. Անդամ պետություններին և Հանձնաժողովին փոխադարձ առևտրում անդամ պետությունների միջև փոխադրվող ապրանքների վերաբերյալ պաշտոնական վիճակագրական տեղեկություններ ապահովելու նպատակով լիազոր մարմիններն իրականացնում են այլ անդամ պետությունների հետ ապրանքների փոխադարձ առևտրի վիճակագրության վարում:

4. Ապրանքների փոխադարձ առևտրի վիճակագրության վարումն իրականացվում է լիազոր մարմինների հետ՝ Հանձնաժողովի կողմից հաստատվող մեթոդաբանությանը համապատասխան:

5. Լիազոր մարմինները Հանձնաժողովին են ներկայացնում անդամ պետությունների պաշտոնական վիճակագրական տեղեկությունները՝ վիճակագրական ցուցանիշների ցանկի համաձայն:

6. Վիճակագրական ցուցանիշների ցանկը, անդամ պետությունների պաշտոնական վիճակագրական տեղեկությունները ներկայացնելու ժամկետները և ձևաչափերը հաստատվում են Հանձնաժողովի կողմից՝ լիազոր մարմինների համաձայնությամբ:

7. Հանձնաժողովն իրավունք ունի լիազոր մարմիններից պահանջելու անդամ պետությունների այլ պաշտոնական վիճակագրական տեղեկություններ, որոնք ներառված չեն վիճակագրական ցուցանիշների ցանկում:

8. Լիազոր մարմինները ձեռնարկում են միջոցներ՝ ապահովելու անդամ պետությունների պաշտոնական վիճակագրական տեղեկությունների ամբողջականությունը, հավաստիությունը և Հանձնաժողովին ժամանակին ներկայացնելը, տեղեկացնում են Հանձնաժողովին պաշտոնական վիճակագրական տեղեկությունները սահմանված ժամկետներում ներկայացնելու անհնարինության մասին:

9. Սույն Արձանագրության դրույթները չեն տարածվում անդամ պետությունների օրենսդրությանը համապատասխան՝ պետական գաղտնիք (պետական գաղտնիքներ) կամ սահմանափակ հասանելիություն ունեցող տեղեկատվություն համարվող՝ անդամ պետությունների պաշտոնական վիճակագրական տեղեկությունների վրա:

10. Հանձնաժողովն իրականացնում է Միության պաշտոնական վիճակագրական տեղեկությունների հավաքագրում, կուտակում, համակարգում, վերլուծություն և տարածում, լիազոր մարմինների հարցումների հիման վրա նշված տեղեկությունների տրամադրում, ինչպես նաև վիճակագրության ոլորտում լիազոր մարմինների տեղեկատվական և մեթոդաբանական փոխգործակցության կոորդինացում՝ սույն Արձանագրության շրջանակներում:

11. Հանձնաժողովը մշակում և հաստատում է Միության պաշտոնական վիճակագրական տեղեկությունների ձևավորման մեթոդաբանությունը, որը կազմվում է Հանձնաժողովին տրամադրվող՝ անդամ պետությունների պաշտոնական վիճակագրական տեղեկությունների հիման վրա:

12. Հանձնաժողովը ձեռնարկում է միջոցներ՝ ուղղված անդամ պետությունների պաշտոնական վիճակագրական տեղեկությունների համադրելիությունն ապահովելուն՝ լիազոր մարմինների կողմից միջազգային մակարդակում միասնական, համադրելի ստանդարտների կիրառման առնչությամբ համապատասխան առաջարկություններ ընդունելու միջոցով:

13. Միության պաշտոնական վիճակագրական տեղեկությունների տարածումն իրականացվում է Հանձնաժողովի կողմից՝ Հանձնաժողովի կողմից հաստատվող վիճակագրական աշխատանքների ծրագրին համապատասխան, Հանձնաժողովի պաշտոնական հրատարակություններում հրապարակելու և համացանցում Միության պաշտոնական կայքէջում տեղադրելու միջոցով:

14. Հանձնաժողովը լիազոր մարմինների հետ համատեղ մշակում և հաստատում է վիճակագրության ոլորտում ինտեգրման զարգացման ծրագրեր: